

**ԲՈՒՆԳԺՈՒՆԺ**

(Charade.)

Երկու եմ ես բաժին,  
Առույնս է սիրո ծայր,  
Երկրորդն ենք միասին  
Ես, դու ես ամեն այր:  
Երկուսքն ալ որ անուռ,  
Անկայտ եմ ես անոյտ  
Մենեակ մ'անդառնում,  
Զեռակերտ չեմ մարդկան:

ՎՅՈՒՄՈՒՄ

**ԲՈՒՆԳԺՈՒՆԺ**

Հուռ ու անծայն մի գերի  
Շքոջան կ'ընէ օրն ի օրն.  
Եւ տարիներ անթերի  
Չ'ըլլաք վայրկեան մ'այլ ի քուն:  
Պար մ'որ աչքն իւր փակէ  
Դժնայտ մի մարդ պղծունդ  
Ներս կը մըտնէ նոյ ծակէ,  
Խորթ ռոգին որ քննի:  
Ո՛վ է կարող զնոր փրկել  
Կապանքներն իւր քանդի.  
Նաեւ այն բանն են պրկել  
Շղթաներով նրկաթի:

ՎՅՈՒՄՈՒՄՈՒՄ ՎԿՂՈՒՄ

Կախուած յորդաշուր Տեղեկի վերայ  
Կամուրջ մը ծածան կայ մարգարոսյան,  
Հազիւ թէ շինուի՝ կամուրջ կ'երեւայ,  
Պայծառ շողալով կ'ըլլէ վեր յայն:  
Երկնաքեր իրն տակէն կամառաց  
Կ'անցնին լեռնամասն կայսրն ռաւերուն.  
Ոտք չէ իւր վերան կոխած մ'արարած.  
Թէ դու երթաս մօտ, նա փախի Տեղուն:  
Զէ մահկանացու մարդի ծնունդն.  
Հուրն է մայր իրն եւ արեւն իւր չայր.  
Կը սպառի կ'երթայ եւ կ'ըլլայ անհետ.  
Թէ շողան երկնք անսով ծայրէ ծայր:  
Ո՛ր ծարարաբազան չինէ անդադար  
Այն ալ ուր չինէ կամուրջն այս ծարարս:

ՂՈՒՄՈՒՄ

Ըսէ տեմեմ, որն է այն տուն մեծատարած,  
Որ է կանգնած վերն անտես շատ սիւներուն.  
Իւր յարկն հուր չի զօրանք տեղ մ'ալ արարած,  
Իւր քցնակիչք են պանդուխտ, ինքն ալ միշտ երեւուն:  
Ճարտարարունեստ ծնող մը չինքն է այս տաճար,  
Եւ բիրտազի շքնաղ զարդուց է զարդարք.  
Խնայաժող չան, եւ կանթեղաց քնքի կանառ  
Կախուք օղոյ մէջ անըպատկ փառն զարծի.  
Բիւրեղափայլ տուրք իրն վրժիտ ձեռքով,  
Որ միայնով միապաղաղ մ'է մարգարիտ:  
Ոչ ոք տեսաւ ծնողն այն չգոր, միայն այն բերուծ  
Որ յօրինած է հրաշակեքսն այս ճշմարիտ:

ԾՊԱՅՈՒՄ



**ՎԵՐԱԲՍՏՈՒՄ**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ**

ՀԱՄԱՆ ԾԱՅՈՒՄ

ՏՆՏԵՍ ԻՆՎԱՐԻՈՒՄԻՆԻՍՏ ԿՐԵՍ



Երեկի մէջ ծաղիկ պահել շատ  
գիւրբի բան է եւ շատ քիչերը  
գիտեն պահելու. եղանակը  
Հաստ անգամ սենեակները  
մթին եւ կամ այնպէս չինուած  
կ'ըլլան որ արեւ չեն տեսներ,  
կամ շատ շուր օգ կ'ունենան,  
եւ այս շուր օգրքովով կը բեղ-  
մաւորի եւ կազի Տեառ միասն-  
լով կ'ապականին, որով տնկերն  
որ մաշուր օգ եւ արեւ կ'ուզեն,  
ի հարկէ չեն յաշուիր: Հաստ  
անգամ նաեւ բարեխառնութեան աստիճանը չի  
պահուիր, այնպէս որ շուր օգով խցի մը մէջ կը  
զրուին այնպիսի անկեր, որոնք չեմաւորին խոտն.  
եւ ասոց օգոյ մէջ միայն կ'ածին, կամ ընդհակա-  
ռակն ընդ սենեկի մէջ կը զրուին այնպիսի անկեր,  
որոնք պաղարանի մէջ միայն պէտք են պահուի:  
Կան անկեր որոնք շուր եւ չամառ չաղոյ վրայ կ'ածին,  
ի՞նչ ասոնք ստեղծ ստեղծ ջրուին՝ հարկաւ կ'ապա-  
կանին. եւ ընդհակառակն ջրաւոր տունէ մ'եթէ  
չըլլաի՝ կը շորնայ: Այս եւ այսպիսի անթիւ մ'ըզու-  
լութեանց պակակալով՝ անային ծաղկաբուծութիւնը  
շատ քիչ կը յաշուի, եւ շատ քիչերը գիտեն թէ  
ինչ բնիւր է ընդհանրապէս այսպիսի անկեր լաւ  
պահելու համար:

Տնային ծաղկաբուծութեան գիտաւոր կա-  
նոններն են հետեւեալները:

Տունին ամեն բանէ աւելի լայն կ'ուզէ, վառն  
զի շատ քիչ տունէ կոյ (զոր օրինակ անկերը), որ  
ասանց լաւայ կարենայ աճիլ: Տունէ կոյ՝ որ եթէ  
քիչ լայն տեսնէ, հաղթէ թէ կը ծաղիկ միայն: Ընդ-  
հանրապէս խոտով՝ լաւ չէ ծաղկաւոր սեղանի  
վրայ թաղարները շարել. վառն զի պատու հանի  
մերձաւոր թաղարները հարկաւ ետեւը կեցող տն-  
կաց լուսոյն արդէն կ'ըլլան, իսկ կարծ անկերը  
նախ եւ յետոյ երկարները գնելը պատու հանին  
տաճիւն առնէ եւ Լաւագոյն է պատու հանի առաւ-  
ջակողման տախտակին վրայ շարել տնկերը այսու  
կանոնիւ: Տունէ մ'որակա աղբիւ տեսնէ սննդի, այն-  
չափ աւելի լուսոյ կորած է, եւ որակի բիրտ է տե-  
րեւն, այնպիսի սակաւ:

Տունիկը լուսնն զատ պէտք ունի Վերսալեան, բայց որով համեմատութեամբ եւ աստիճանաւ ըստ բարձրանալու կազմածին: Ընդհանուր կանոն է՝ որ տունիկ մ'որակի կարելի է այնչափ բարեխառնութեան մէջ պահել, որչափ բնական վիճակին մէջ պէտք ունէր: Տունիկ մը կ'ապականի եթէ միտ չգրուի ասոր, եւ այն թէ շափեն աւելի ջերմութեամբ եւ թէ շափեն աւելի ջրառութեամբ: Պարտաւորապէս սովորաբար կ'ունենայ այլեւայլ բարեխառնութեամբ ջերմութեաւ տնենաներ տնիկերը ձմերկու համար: Այսպէս Ռեֆորթի 5—80 աստիճան ջերմութեան մէջ կը պահուին ճարմին, Չինաստանի, հափի եւ քանաքանակ կղզեաց տնիկերը, եւ այլն: Միայն 1—50 Ռ. ջերմութեան պէտք ունին Հարաւային Եւրոպայի տնիկերը: Ենթարեալ պարտաւորապէս երկիրներու տնիկերը ձմերկու համար 8—120 Ռ. պէտք ունին, մինչ արեւադարային տնիկերը 15—170 Ռ. ջերմութեան կ'ուզեն: Ջերմութեան աստիճանին լաւ միտ չգնելով՝ տունիկը դեռաւ կը քանար:

Ծառաւորչիւ. ե նաեւ ճիւղաւ ցափն ու եղանակը: Դասի որչափ հնար է՝ Լըհարը Լուր չգործածուի, ուրիշ ինչ եւ ինչ Լուր նախապէս համարելու է: Հարկաւ անձերեալուն անխառն է, բայց մեծամեծ բաղաբայ մէջ անհնար է անձերեալով դառնել: Զգուշանալով է նայնպէս՝ որ սովորութիւն չըլլայ ամէն դր սնհրածից Լուր տալը, այլ միայն ճիւղին է այն տանի, երբ չորցած է հողը. ասոր (չորնալու) նշանն է՝ եթէ թաղարը բախուի կարծր առարկայով մը եւ պայծառ հնչելն այս. իսկ առաւել կամ նուազ աղօտ հնչելն տնին է շատ անգամ քիչ խառնութեան: Այս նշանը դժուարին է, վասն զի ակնաջը դիւրեւ կը վաթիկ այս հնչանոց զանազանութեան: Վերջապէս Լուր տալու համար պէտք է նայիկ որ տունին աճման թէ ծաղկելու, պարզաբերելու թէ հանգստեան մէջ է. այս վերջին պարագային շատ քիչ Լուր տալու է, այնպէս որ քիչ մ'աւելի ջրով կը փնտէ: Ընդհանրապէս քիչ ջրով չի փնտեր այնչափ՝ որչափ շատ ջրով, առաջով թերեւս քանի մը տերեւ թաղարային, բայց վերջով տունիկը կ'ապականի: — Առաջայն է իրիւնքը ջրէն, ինչպէս փորձը կը ցուցնեն, եւ զգուշանալու է արեւու լուսոյ սաստկութեան մէջ գործնող տնիկը որ ծերկը կամ ցնցըլէն, թէ եւ այս սովորաբար սօսական է տնիկը, ի բայ առաւել կ'անդիւրման տնիկերը, որոնց Լուր տալու է արմատէն:

Լաւ միտ դնելու է նաեւ Ռադընթերան: Կան տնիկեր, որոնց արմատը դէպ ի վար կ'երկարին, եւ կան ալ՝ որոնք Տորդենական գրիք արմատ կ'արձակեն: Ուստի եւ առաջնոց համար տափարակ, իսկ վերջնոց համար նեղ թաղար դնելը փառակար է: Պարզ է չորածենը արձնելով թաղարները, վասն զի արձնումը կ'արգելու որդ անյուզգործը, եւ հոգով ծծած Լուրը չի կրնար շոգիանալ: Բայց եթէ զարգում համար կ'ուզուի այսպիսի անգործը չործառնել, գնանայ պէտք է ասանց մէջ հողէ թաղարներ գնել, այնպէս որ երկուստքին մէջ ազատ միջոյ մ'ըլլայ:

Հոյս պարտաւոր մէկըր ունենալու է, վասն զի կոտրած թաղարի մը հոյսն ուրիշ տնիկ պարծ-

ածելը շատ քիչ անգամ յաջող է: Գարնան պէտք է թաղարէ թաղար փոխադրել տնիկին, այնպէս որ առանց ասոր դժուարու. կը յաճողին տնիկերը: Ընդհանրապէս հողոյ ընտրութեան մէջ շատ հոգ ընելու չէ, վասն զի ընտանի տնիկը դրելով է որեւէ հողոյ մէջ բաւական կ'աճին: Պարտաւորապէս կը հաւատասեն թէ իւրգի գուր տուած հողը թէ եւ շատ պարարտ է, բայց անհնկի ծաղկանց համար բաւական է:

Հողը պարագայընէն ալ շատ գուրշութիւն պէտք է, վասն զի սովորաբար կամ շատ կամ տարածամէր կը գրուի պարարտացուցիչ նիւթ: Ամենին լաւ պարարտացուցիչ նիւթն է թոռնոյ աղը (Guano), որուն կէս քիլոկրամը կրնայ 100 լիտր տաք ջրոյ մէջ լուծուիլ եւ այնպէս լուծուած գործածուի: Պարարտացման հետեւեալ կանոններուն պէտք է միտ լինել:

1. Պէտք չէ պարարտացնել տնիկը հանգիստեան ժամանակ:

2. Այն տնիկեր, որոնք շատ պարարտ հողոյ մէջ են, ի սկզբան պէտք չեն պարարտացուցիչ:

3. Խոտանման եւ արագ աճող տնիկը, ինչպէս են աղուեսուկ (fuchsia), խորդենի (pelargonium), լանտանային (lantana camara), արեւածաղիկ (beliotrope) եւ այլք, պէտք է շատ պարարտացուցիչ նիւթ տալ իրենց աճման ժամանակ:

4. Ամեն տնիկը բողբոջելու ժամանակ ուստ ջրառան պարարտացուցիչ պէտք է տալ:

5. Ջրախառն պարարտացուցիչն աւելի լաւ է՝ եթէ շատ Լուր չըլլայ մէջ քանի է քիչ:

Վերջապէս անհրաժեշտ է իրելու անոթ մը, ցնցող մը, որպէս զի տնիկը տերեւները փոշիներէն մաքրուի, որոնք թէ աղբալի թիւն են եւ ի կ'ուրգելուն տնիկը օգ ծծելը: Ծառ անոթով յարմար է սղառի գործածել տերեւները մաքրելու, բայց երբեմն պէտք կ'ըլլայ նաեւ խառնի գործածել: Ջուր տալու առեն նայելու է որ Լուր հեղեղորեն տնիկին սիրտը չվազէ եւ չժողովի հնա. եւ ընդհանրապէս արմատենի, պտեր (filix) եւ սրբաւարմատողի տնիկեր պէտք է վերեն ցնցող ջրէն, վասն զի այս կերպը կը փնտէ ասոնց: Վերջապէս թփիկները եւ ցորունները պէտք է ղեցուկներու կապել:

Այս ամէն զգուշութիւնները գործադրելով ալ՝ շատ անգամ կը փնտին տնիկը այնչափ հիւստնութեանց պատճառաւ:

Գլխաւոր հիւստնութիւն է արմատի քայտնէն, այսինքն շատ անգամ եւ շատ Լուր տալով կ'ախտանայ արմատը, որուն առջեւ անշուք համար պէտք է փոխադրել տունիկը եւ փնտանալ մասը կտրել. բայց եթէ յառաջացած է հիւստնութիւնը, ճար չկայ: Այնպէս է տնիկը արտի փտութիւնը, որ յառաջ կաւ զայ կը Լուր տալու առեն շատ Լուր ժողովի հնա: Այսպիսի հիւստնութեանց նշանն է տերեւի մանաւանդ եղբայր գեղեցիկ սկսիլը, եւ թափիլը:

Վնասակար են նաեւ ժժուկները կամ ճնշները: Բայց ճնշներն երբեք առողջ տնիկ չեն մերձեւոր, ուստի այն տունիկն որ ճնշակը կը սկսի բուսիլ, արդէն հիւստնութիւն մ'աճի, եւ զայ պէտք է դառնել: Գիւրաւ կը առնան ինչ կարմիր սարգերը,

որոնք երբ շատ շուրջ օդով մէջ է տունը, կը պատեն իրենց ցանցով զայն եւ կը ծծեն հիւթը: Ասոնց առաջն առնելու համար պէտք է ծխախոտի ջրով կամ սեւ օճախի լուծուածով լուալ:

Կման պարագայից մէջ, եւ երբ քիչ օգ կը թափանցէ թաղարին մէջ, երեւան կու դան տերեւի կափիներ, որոնց գէճն նոյն միջոցներով առնելու է, կամ ֆեռտուալ մտօք կտրելու: Է. Գոճան (Coccus) տերեւոց եւ ցօղոց հիւթը կը ծծէ կ'առնու, եւ սովորաբար վարդասարգի (Nerium oleander), արմաւենի, կոզնիկ (Cactus) եւ վարդի կը ֆեռտու, որուն գէճն առնելու է վերջոյիցնայ եղանակաւ:

Խաբունի (Thrips) շատ ֆեռտու է, այնու որ այս մակաբեղջիկ պարզ աչքը անտեսանելի է եւ շատ կ'աճի եւ կը ֆեռտու տերեւներուն, որոնք գեղեցիկ կ'իյնան: Բազմապատկուածեան առնելու պէտք է մաքրել բոտանիքը (երկրամայր): Եթէ բռնել չայնողի պէտք է մոխիր ցանել թաղարին վրայ եւ ջուր տալու է. միխալուրը կը ջնջէ բոտանիքը, այսինքն կը ստիպէ որ թաղարի յատակն իջնու, որով գիւրաւ կը բռնուին: Ըստ անգամ կը բաժնէ միայն 400 Ռ. Վերալի թեմքը շուր լեցընել թաղարին մէջ, մանաւանդ էթէ մէջը քիչ մ'ընկու: Գեղեցիկ տերեւ եկուած է:

Չենք խօսի միջեան, նեպուրի, ճնճուրկի եւ այլ նմանեաց ջնջման վրայ, որոնք կրնան տնկոց երբեմն ֆեռտու: Բայց առաջինը սենկեաց մէջ չի գտնուիր, իսկ վերջինները ջնջել անհնար է. մանաւանդ թէ ամառը օգտակար ալ են: Հաշուած է որ զոյգ մը ճնճուրկ մէկ շաբթուա մէջ 3000 թերթուր կը կերցընէ իւր ձագերուն:



## ԱՌԵԻՑՐԱԿԱՆ

(ՏՆՆՆԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊՐ. Զ. ԲՈՐԱՐԱՂՈՂՆԵՐ)

## ԱՌԵԻՑՐԱԿԱՆ ՄԱՆԻՐԱԼՈՒՐԷ

Պաշտօնաբեկ բարբէ որդա՞նիքն: Պու՛ն չիբէի անգղեական հիւպատոսը կը գրէ. Պարսկաստանի արտածած բուրդն սովորաբար կոշտ է եւ անմաքուր: Պու՛ն չիբէի տեղեկաց առեւտրական սենեակ մը կը հաստատու, թէ Տարաւային եւ Տարաւ-արեւմտեան Պարսկաստանէն ամէն տարի 3,125,000 lbs. բուրդ կ'արտածուի, որուն մէկ բաւորդն կ'երթայ Պոսիկ, մնացածը Պաստապ, ուր բարբէ կը մաքրուի եւ Պաղտատի լաւագոյն տեսակ բուրդներուն հետ կը խառնուի եւ կ'ուղարկուի Գաղղիա, Անգլիա եւ Ամերիկա: Արտածութեան քանակութիւնն ոչինչ է համեմատութեամբ երկրին մեծութեան. սակայն միտ գնելու է որ բրդին մեծ մասը կը գործածուի գորգ, թաղթ (սեյ) եւ ուրիշ նիւթեր շինելու:

Կեդրոնական Ալիէ բարբէի որդա՞նիքն: Անցեալ տարի Զըր. 1 էն միլիւն 1 Սեպտ. Ատուն-

Ատայէն (կասպեան ծովուն եղեքն) 18,437 տկուչի. բամբակ ուղարկուեցաւ. Ռուսիոյ գործատներուն. մնացեալ չորս ամիսներուն համար կը համարուէր 8000 տկուչի., այնպէս որ ամբողջ տարին 26,129 տկուչի. Ըլլայ: 1888ին Ռուսիա ուրիշ երկիրներէն ներածուեցաւ 111,129 տկուչի. բամբակ, Կենդրոնական Ասիայէն անգղիական երկաթուղով 14,264 տկուչի. ուր այս երկաթուղով շինութիւնէն յառաջ անկէ կու գար միայն 9677 տկուչի.: Ռուսիան այս արտածութիւնն երկու տարւան մէջ 150 առ հարիւր աճած է. բայց աւելի մեծ աճում կ'առնու, էթէ կասպեան նաւերն, որոնց ամբաւականութեան վրայ շատ կը արմարուի, ըստ պատշաճի անճշտուելու Ըլլան: Ահագին ապրանք կը մնայ Ատուն-Ատա նաւի պակասութեան պատճառաւ:

Փոք-Ալիէ որդա՞նիքն: Անցեալ տարւան վերջերս Ամասիայէն գերմանական հիւպատոսին առած տեղեկութեան համեմատ՝ Անաւորուի արտածութեան ամէն աւարիաներն շատ կը կրնն եւրոպական շուկաներու մէջ նշյններուն գնոյն նուազելուն պատճառաւ: Բուրդի, մորթի, ցորենիղինաց, դժբիկի հատիկի, արական խիճի, ափիսի, Անկիւրիոյ այծի բուրդի եւ այլն գիներն այսօր այնպէս ինկած են, որ նշյններն յառաջ բերողներու ծախքերն հազիւ կը գոցեն: Ասիկայ ի մասնաւորի կ'արժէ ցորենիղինաց մշակութեան համար. վաճառ ծովէն 40 միլն հեռու երկիրներու մէջ մշակութիւնն անվարձ կը մնայ, փոխադրութեան սաստիկ սղութեան եւ դժուարութեան պատճառաւ: Իսպանիոյ շուկային վրայ, որ Ամասիոյ հարաւակողմն է 25 ժամ հեռու, ցորենիղինաց գինն այս էր. 8օրեն 2—2 1/8 մարք, (մարքը 6 մարքուր ղը. հաշուելով.) հաճար 1 1/4—1 1/2 մարք, գարի 1 1/3 մարք, 100 քիլոյրմար: Եւ սակայն այս գնով ալ չկայ այնչափ գնող, այնպէս որ հաջադատոր ապկառ ցորենիղին գնող չըլլալուն կը փոխ կ'երթայ: Անկիւրիոյ այծի բուրդի գինը կը բարձրանայ:

Բարբէ ծալի կիւնէ: Չարբէսընի (հարաւ. Կարդինիա) մէջ Dr. Panknin աղայած է ramie անուն ծառին կեղեւէն բամբակ պատրաստել, էթէ այս գիւտն ստուգուի, բամբակագործութեան մէջ հաջադատ Եղափոխութիւն մը պիտի յառնէ:

